ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն Հոգեբանություն, 031301.01.6

Որակավորումը Բակալավր

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա 2-րդ կուրս. 2-րդ կիս.

Հաստատված է

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում

(արձ. թիվ 1, 28.08.2023 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Լ. Բաղդասարյան

Հաստատված է

Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. թիվ 1, 11.09.2023 թ.)

ֆակուլտետի դեկան՝ Ղ. Պապոյան

Վանաձոր

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Պրակտիկայի նպատակը և խնդիրները

2. Պրակտիկայի տեղը կրթական ծրագրի կառուցվածքում

3. Պրակտիկայի արդյունքները

4. Պրակտիկայի ռեսուրսային ապահովումը

5. Պրակտիկայի ընթացակարգը

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

5.2. Պրակտիկայի գնահատումը

1. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնական պրակտիկա (2 կրեդիտ) հիմնական նպատակն է ծանոթացնել մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներին, առանձնահատկություններին՝ պարտականություններին, իրավունքներին և աշխատանքի պայմաններին, կրթական հաստատությունների իրավական նորմատիվ ակտերին և մասնագիտական գործառույթներին:

Ուսումնական պրակտիկայի *խնդիրներն* են.

- ✓ ձևավորել կարողություններ, որոնք կնպաստեն ուսանողների առջև դրված նպատակին համապատասխան դուրս հանել խնդիրներ, որոշել այն առաջադրանքները, որոնք համապատասխանում են կրթության օրենքին և ընտրել դրանց լուծման լավագույն ուղիները,
- ✓ ծանոթացնել ուսանողներին կրթական հաստատության կառուցվածքին և այն գործընթացներին, որոնք կապված են հոգեբանի աշխատանքի հետ (խնդիրների վերհանման, աշխատանքների պլանավորման և դեպքի վարման),
- ✓ մասնակցել քննարկումների և վերլուծել մասնագիտականգործունեության իրականացման առանձնահատկությունները,
- ✓ ձևավորել ուսանողների մոտ հաղորդակցման հմտություններ, որոնք հնարավորություն կտան նրանց շփվել հաստատության վարչական կազմի և ուսուցիչների հետ մասնագիտական խնդիրների վերհանման և մասնագիտական ներազդման նպատակով:

2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՂԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Հոգեբանություն, 031301.01.6 որակավորման (աստիճան) «Բակալավր») ուսումնական պրակտիկան կազմում է մասնագիտական կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Պրակտիկայի ընթացքում ուսանողին հնարավորություն է ընձեռնվում իրական դաշտում ներդնելու ուսումնառության ընթացքում «Ընդհանուր հոգեբանություն», «Տարիքային հոգեբանություն» առարկաների շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները:

Ուսումնական պրակտիկայի տիպը՝ փաստահավաք:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Հոգեբանություն» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկայի արդյունքում ուսանողները ձեռք կբերեն մասնագիտական գիտելիքներ, ընդհանրական մասնագիտական կարողություններ, որոնք կնպաստեն կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Կոմպետենցիա / կոդ	Կոմպետենցիայի ցուցիչը	Արդյունք
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		
Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը:	- Հոգեբանի կողմից աշխատանքում կիրառվող մեթոդների վերաբերյալ: - Հոգեբանի գործունեության փաստաթղթավորման վերաբերյալ: - Հոգեբանի գործունեության էթիկայի վերաբերյալ գիտելիքների առկայություն:	- Հոգեբանի աշխատանքի հիմնական կանոնները, տիրապետում է օրենսդրական դաշտին: - Ծանոթ է կրթական հաստատությունում հոգեբանի գործունեության հետ կապված փաստաթղթավորման գործընթացին:
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ		
- Կազմակերպել հոգեբանական ուսումնասիրություններ և հետազոտություններ	- Կիրառել ստացած գիտելիքները մասնագիտական գործունեության ոլորտում խնդիրների վերհանման և աշխատանքների	- Կարող է վերլուծել և առանձնացնել մասնագիտական խնդիրները, - Կարող է որոշել խնդիրների լուծման համար

	ծրագրավորման նպատակով: - Հավաքել տվյալներ, մեկնաբանել, ներկայացնել դրանց կիրառման որոշակի գործիքներ և մեթոդներ	անհրաժեշտ ռեսուրսները: - Կարող է նախապես պատկերացնել խնդրի լուծման արդյունքները: - Գիտի երեխայի հետ հոգեբանի աշխատանքի մեթոդներ: - Գիտի հոգեբանի կողմից դեպքի վարման առանձնահատկությունները:
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ		
- Օգտվել տեղեկատվական աղբյուրներից, մշակել և ներ-կայացնել տեղեկատվությունը - Տիրապետել ինտելեկ-տուալ, բարոյական, կոմունիկատիվ և կազ-մակերպչական կարողություններին	- Խորացված գիտելիքներ կրթական համակարգի իրավական նորմատիվ ակտերի և գործառույթների վերաբերյալ: - Պատրաստել զեկույցներ, իրականացնել համեմատական վերլուծություններ: - Կարող է իր գործունեությունը կառուցել հոգեբանի էթիկայի սկզբունքներից ելնելով, - Ցուցաբերել հանդուրժողականություն	- Խմբում աշխատելու կանոնները - Հաղորդակցման և միջանձնային հարաբերությունների կանոնները - Որոշել թիմային աշխատանքի ռազմավարությունը, բաշխել դերերը, պլանավորել գործողությունները՝ ապահովելով նպատակի հասնելիությունը: - Կրթական հաստատությունում հոգեբանի աշխատանքի գործընթացների

		կազմակերպման և կառավարման կանոններին և էթիկային: - Տիրապետում է բարեվարքության կանոններին

4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է ապահովված լինեն հիմնական և լրացուցիչ գրականությամբ, որը կօգնի նրանց ներկայացնել հաշվետվություն պրակտիկայի վերաբերյալ:

Абрамова, Г.С.Практикум по возрастной психологии: Учеб. Пособие для студ. Вузов /Г.С. Абрамова – М.: Академия, 1998. – 320 с.

Белобрыкина, О.А. Диагностика самосознания в детском возрасте /О.А. Белобрыкина – СПб.: Речь, 2006. – 320 с.

Պրակտիկայի համար անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցի ինտերնետ ռեսուրսներ

https://uchitel.ru/stories/psiholog-dlya-rossii/

https://thelib.info/psihologiya/2496463-resursnoe-obespechenie-praktiki/

https://mgou.ru/wp-content/uploads/2018/02/Praktika-po-polucheniyu-prof-umenij-i-opyta-prof-deyatelnosti-PP.pdf

https://activityedu.ru/Blogs/blog/pedagog-psiholog-v-shkole-ochen-vazhnaya-professiya/

https://psylist.net/pedagog/scoolpsyhkol.htm

5.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

«Հոգեբանություն» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկայի

	Բովանդակություն

Շաբաթ 1	Ծանոթանալ պրակտիկայի ծրագրին, նպատակին: Քննարկել խնդիրները: Ծրագրավորել աշխատանքները: Ծանոթանալ հաստատության հոգեբանամանկավարժական գործընթացի պլանավորման, կազմակերպման և ղեկավարման աշխատանքների սոցիալ-հոգեբանական գործառույթներին:
Շաբաթ 2	Ծանոթանալ հոգեբանի աշխատանքի առանձնահատկություններին: Քննարկումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն: Սոցիալ-հոգեբանական խնդիրների վերհանում և մասնակցություն դրանց մասնագիտական ձևակերպման գործընթացում:

5.1. Պրակտիկայի ղեկավարների պարտականությունները, գործառույթների նկարագրությունը (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի)

Հոգեբանության մեթոդիստը

1. Մասնակցում է պրակտիկայի կազմակերպման նախնական և ամփոփիչ կոնֆերանսներին (պլանավորում է համատեղ աշխատանքում ուսանողների և պրակտիկայի մյուս պատասխանատուների հետ):

2. Աջակցում է պրակտիկանտի պրակտիկայի գործունեության ընթացքում մասնագիտական նորմատիվային ակտերի ծանոթացման և գործընթացների փաստաթղթաշրջանառության հետ: Կազմակերպում և գնահատում է վարվող դեպքերի, ուսումնասիրության մեթոդների վերաբերյալ քննարկումներ:

3. Աջակցում է ուսանողի անձնային աճի, հաղորդակցական կարողությունների և մասնագիտական հեռանկարների զարգացմանը՝ դրանց պլանավորման և գնահատման գործընթացում:

4. Տրամադրում է նյութեր և խորհրդատվություն, մասնագիտական գործունեության ռեֆլեքսիայի և թիմային աշխատանքի հմտությունների զարգացման գործընթացում:

5. Ցուցաբերում է հանդուրժողականություն և բարեվարքություն, նպաստում համագործակցության կարողությունների զարգացմանը:

6. Հաստատված ձևաչափով որակապես գնահատում է պրակտիկանտի գործունեության արդյունքները, արժևորում է պրակտիկանտի գործունեությունը՝ ներկայացված դեպքերի, իրավիճակային վերլուծության, պրակտիկայի առաջադրանքների տրամադրման, կատարման ինքնագնահատման արդյունքների հիման վրա:

Հաստատության աշխատակից ղեկավարը.

- Ծանոթացնում է հաստատության աշխատակազմին, կարգ ու կանոնին, անհրաժեշտ փաստաթղթերին,
- մասնակցում է պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ խորհրդակցություններին,
- ղեկավարում է պրակտիկայի ծրագրով նախատեսված ուսանողների աշխատանքը,
- մյուս մեթոդիստների և հաստատության աշխատակազմի անդամների հետ միասին գնահատում է յուրաքանչյուր ուսանողի աշխատանքը,
- հաշվետվություն է ներկայացնում պրակտիկայի ղեկավարին ուսանողների կատարած աշխատանքների վերաբերյալ:

Պրակտիկանտների պարտականություններն ու իրավունքները.

- պահպանել հաստատության աշխատանքային կարգապահությունը,
- մշակել պրակտիկայի անհատական պլանը պրակտիկայի ղեկավարների օգնությամբ,
- աշխատել համաձայն հաստատված պլանի, ժամանակին ներկայացնել հաշվետվություն,
- ծանոթանալ հաստատության սոցիալ-հոգեբանական աշխատանքների պլանավորման, կազմակերպման և ղեկավարման առանձնահատկություններին,
- ծանոթանալ հաստատության հոգեբանի գործառույթներին և կիրառվող մեթոդիկաներին,
- կատարել պրակտիկայի արդյունքների վերլուծություն և կազմել հաշվետվություն:

Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը

Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը համարվում է «Հաշվետվությունը», որտեղ և արտացոլվում է ուսանողի կողմից իրականացված հոգեբանամանկավարժական աշխատանքները, հոգեբանական դիտարկումների արդյունքները:

5.2. Պրակտիկայի գնահատումը

Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի